բան ես ասել, որեւէ աննպաստ կարծիք ես յայտնել եւ սկսել են քեզ նեղել: Դրօշակի մասին նրանք վաղուց տեղեկութիւն ունէին, բայց պահում էին ձեռքի տակ, անհրաժեշտ րոպէին դուրս հանելու համար...

— Ճշմարտութիւնը այն է,— ասում է մի ուրիշը,— որ դու սրճարանում նստում ես բարեկամ մի կոմիսարի հետ: Արդ, պէտք է իմանաս, որ նրանք իրենց մէջ մէկ մէկի միսն են ուտում եւ, որովհետեւ թշնամի կոմիսարը իրեն կուսակցական ընկերոջ մնաս չի կարողանում հասցնել, նեղում է քեզ, նրան դժգոհութիւն պատճառելու համար...

Ոչինչ չեմ հասկանում:

Խոհանոցը նորից մնաց բաց...

* * *

— ...

Ցուրտերը սկսուել են:

Հովը կատուի իր թաթերով պատուհանների թղթերը քերում է:

Անձրեւ էլ է գալիս: Տանիքը շորս տեղից կաթում է:

Պարլամենտի դրօշակի պատմութիւնը ամենին յայտնի է, բայց այդ մասին ոչ ոք չի խօսում: Վախում են: Փողոցից անցնելու ժամանակ ոմանք նայում են ինձ վերից վար եւ մի բոպէ կանգ առնում աչքերիս մէջ: Բարեկամ կուսակցականները չափազանց քաղաքավարի են: Վատ նշան:

Հովը կատուի իր թաթերով պատուհանների թղթերը քերում է:

* * *

Նոյեմբեր.—

Ձմեռը ուղեղների շուրջը սառոյց է կապել:

Մտաւորական բարեկամներս, վերից վար կոճկուած վերարկուների տակ, բարոյապէս կծկուել են: Ընչին այդ ջերմութեան մէջ մտքի բոլոր ծիլերը չորացել են: Ոչ մի կենդանի խօսք, ոչ մի ճառագայթում, ոչ մի յոյս:

Առաջին ձիւնը:

Առաջին այդ ձիւնը միակ լուսաւոր երեւոյթն է առայժմ: Փաթիլ-փաթիլ իջնող ծուէնների տակ կարծես ամէն ինչ աղնուանում է, ծածկւում, շղարշւում: Ինչ որ մի մեղմ երաժշտութիւն եւ դիւթիչ մի մելամաղձոտութիւն քաղաքին միւս աշխարհից են խօսում:

Փողոցներում դրեթէ մարդ չկայ: Հաղուագիւտ անցորդն էլ վրաղ չտալով է տուն:

Սիրում եմ այդպէս: Քայլում եմ, դրեթէ ուրախ:

Ի՞նչ լաւ է երբեմն երկու քայլ աւելի հեռուն չտեսնելը: Ձիւնը ուսերիս թեւեր է տալիս՝ թեթեւ եմ: Բարձրանում եմ փողոցի դարիվերից Արարատեան դաշտը տեսնելու համար: Ոչինչ չի երեւում: Ծուէնները օդի մէջ հէքեաթ են պատմում. կամաց-կամաց, լողալով վայր են իջնում եւ դետնի վրայ թառում:

Ձիւնը անարատութիւն է: Ձիւնը երկնքի աղօթքն է երկրին ուղղուած:

Երեկոն արդէն մօտեցել է: Գրեթէ մութ է: Տեղ տեղ լոյսեր են վառել, եւ քաղաքը նըմանում է աղքատ մի տօնավաճառի:

Գիւղերում օճախները վառուած են: Երախաները ժողովուել են պառաւ մամի շուրջը եւ ձեռքերը բոցերի դէմ տուել: Մամի գլխի մէջ, դարերի շրթունքների վրայ որոճուած պատմութիւնները ճերմակ ձիեր են նստել եւ ճամբայ ընկել: Իսկ մենք քայլում ենք ցեխերի մէջ: Մամը մեռել է, առանց որ երբեք երեսը տեսած լինեմ: Տանը օճախ չկայ: Երախաները երեւի մտել են վերմակների տակ:

Ու քայլերս քարշ տալով վերադառնում եմ տուն:

Տո՛ւն, ուր ծուէնների ճերմակ ծաղիկները ոչինչ չեն ծածկում, ուր ցուրտը դանակ է սըրել, ուր այնքան տխուր է:

* * *

— ...

Խօսք եւ գործ:

Այսօր Մարգար աղայի սրճարանում, նըկարիչ Ս-ի եւ երգիչ Ն-ի հետ նստած «Մարտակոչ»ի առաջնորդողն էինք կարդում, ուր ռուսերէն լեզուի գործածման կողմնակիցները հակայեղափոխական եւ Դաշնակցական էին անուանում եւ հիմնարութիւնների հայացման անհրաժեշտութիւնը ապացուցանում:

Ձիւղ այդ ժամանակ ներս է մտնում մի միլիցիական, ռուսերէն գրուած մի թուղթ է երկարում Մարգար աղային եւ պահանջում, որ ստորագրի: Մարգար աղան յայտարարում

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան